ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԿԱՐԷՆ ԲԱՂԴԱՍԱՐՈՎ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ բարեմաղթանքները:

Մեծարգոյ պրն. Բաղդասարով,

Այսօր առիթ ունենք հոգու խնդութեամբ անդրադառնալու Հայրենի մեր Երկրի զօրացմանն ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանը մասնակցութիւն բերելու Ձեր ազնիւ պատրաստակամութեանը:

Երկար տարիներ ապրելով ու գործունէութիւն ծաւալելով Ռուսաստանի Դաշնութիւնում, Դուք Ձեր հոգում անխախտ էք պահել որդիական կապուածութիւնը ազգային ու հայրենական մեր արժէքներին՝ մշտապէս ջանալով ծառայութիւններ մատուցել ի նպաստ հայրենակերտումի սուրբ գործի: Ուրախ ենք նշելու, որ Դուք բարեսիրական տարբեր ծրագրերով գնահատարժան աջակցութիւն էք բերում հայրենաբնակ ու արտաքնաբնակ մեր ժողովրդին՝ յաղթահարելու առկայ տնտեսական դժուարութիւնները եւ կառուցելու իր նոր, բարգաւաճ կեանքը:

Եկեղեցանուէր Ձեր ծառայութիւնը եւս Տիրոջ օրհնութեան ներքոյ արգասաւորուած է բարի արդիւնքներով: Դուք սրտաբուխ բարեգործութեամբ Ձեր արդար վաստակը ներդրեցիք ի սպաս Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցման, որը նոր, պանծալի խորհրդանիշ է ռուսաստանաբնակ Մեր զաւակների հաւատի արթնութեան, եկեղեցասիրութեան ու ազգասիրութեան:

Գոհունակ սրտով գնահատելով Ձեր ծառայութիւնները մեր ժողովրդին ու մեր Սուրբ Եկեղեցուն եւ սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մաղթում ենք, որ շնորհեալ պարգեւը Ձեզ համար դառնայ խանդավառութեան նոր առիթ, որպէսզի Դուք շարունակէք օրինակելի նուիրումով ու հաւատարմութեամբ Ձեր

բարի ծառայութիւնը ի բարօրութիւն մեր ժողովրդի եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Տիրոջ ամենառատ շնորհները Ձեզ եւ Ձեր ընտրանեաց անդամներին՝ մաղթելով կենաց քաջառողջութիւն եւ առաքինազարդ գործոց յարանոր յաջողութիւններ:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 770